



ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ԵՐԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳԱՄԵԱՅ ՅՈՒՆԵՍԿՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ
ԾՆՈՐՀԻՒ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՎԵՐԱՏԵՍՈՒՉ ՍՈՒՐԲ ԵՒ
ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՑՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԷ ՀԱՍՑԷ ԾՆՈՐՀՔ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱԶԳԱՊԱՐԾԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ

Սրտի անհուն գոհունակությամբ է որ կ'ողջունենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանն եօթանասունհինգամեակը: Երուսաղեմի Պատրիարքությունը, Սրբոց Ցակոբեանց զինուորեալ Միաբանությունը և մեր հայ համայնքը ուրախ և երախտալարտ սրտով կը յայտնեն, մեզի հետ, իրենց սէրն ու հիացումը Միությանը: Բարեգործականը հայ ժողովուրդին համար իրական նախախնամություն մը եղած է, աստուածային գթության և ողորմության կենդանի պատկերը, մեր կարիքներուն և ցաւերուն իբրև փութանք:

Ազգապարծան այս Միության ծնունդը մեր պատմությանն հոյակապ էջերէն մին կը կազմէ և իր եօթանասունհինգ տարիներու բազմաթիւ իրադրծումները կը լեցնեն հայ կեանքը, մանաւանդ արտասահմանի տարածքին: Նմանօրինակ ուրիշ ոչ մէկ ազգային հիմնարկութիւն, թէ՛ իր գոյությամբ և թէ իր արգասիքներով, չէ կրցած հաւասարիլ առողջ և կենսունակ այս «փոքրիկ հանրապետութեան», ինչպէս կը սիրէր ըսել անոր երանալ հիմնադիրը:

Հ. Բ. Ը. Միությանն եռթանասունհինգամեայ յղացքը յատկօրեն տեսնել կարենալու համար, անհրաժեշտ է դար մը ետ երթալ մեր օրերէն, կըշնելու այն մեծ ճիգը՝ զոր մեր ժողովուրդը փորձեց ԺԹ դարու կէսերէն իսկ, ժամանակին յարմարելու, ինքզինքը նորոգելու եւ իր գործունէութիւնները բերելու ազգային գիտակցութեան սեղանին:

Այդ ճիգը կը տարածուէր մեր կեանքի բոլոր երեսներուն վրայ: Բարձրագոյն կրթութեան դպրոցներու ցանցը, ընկերային գետնի վրայ մեր ստեղծած օրէնսդրական կազմակերպութիւնները, մամուլի եւ գրականութեան շնորհիւ մեր արուեստի զգայարանքին կազմաւորումը, արդիւնքներն էին մտքի այդ սլացքին: Հակառակ այս իրողութիւններուն, 1900ին մեր ժողովուրդի հոգիին մէջ ամենէն խոր յուսահատութիւնը կը տիրէր եւ մեր ժողովուրդի վերին խաւը կը մտածէր նոր իրագործումներու, մեր ցաւերուն եւ կարիքներուն իբրեւ սպեղանի:

1906ին, Եգիպտոսի մէջ սպայակոյտ մը հարուստ եւ ականաւոր հայերու, գլխաւորութեամբ յաւէտ անմոռաց Պօղոս Նուպար Փաշայի, հիմը կը դնէին նոր կազմակերպութեան մը, նոր գաղափարաբանութեան մը, Հ. Բ. Ը. Միութեան ծրագիր ձեռնարկին: Առաջին անգամն էր, որ ունեւոր մարդիկ դուրս կու գային իրենց հեշտախոր եւ երջանիկ կղզիացումէն, հետապնդելու ազգային մեծ իտէալ մը:

Կրկին էր արժ՝քը այս հաւաքական ձեռնարկին՝ մեր ազգային իրականութեան մէջ, բարոյական եւ միջակայ: Բարոյական՝ վասնզի ասով ազգային ունեւոր դասակարգը ոչ թէ քմահաճոյքով, այլ ի պարտաւորութենէ կը մօտենար ազգային վերքերուն եւ կարիքներուն, իսկ իբրեւ միջակայն ձեռնարկ, օգնութեան եւ նպաստի աննախընթաց կազմակերպութիւն մը կը հիմնէր: Անոր նախախնամական դերի մասին որեւէ վարանք ներելի պիտի չըլլար ռեւէ հայու, որ ունի իր ազգին հպարտութեան զգացումը:

Անոր խնամատարական դերը մանաւանդ՝ արկածահարութեան ենթարկուած մեր ժողովուրդի բնկորներուն հանդէպ, վերածեց Միութիւնը բուժիչ ձեռքի մը, երկարած մեր վերքերուն, Աւետարանի Բարի Սամարացիին չափ սրտառու:

Եօթանասունհինգ տարիներ վերջ, երբ կը մայինք իր շքեղ արդիւնքներուն եւ մատուցած բարիքներուն, կ'ըսենք իւրովի. Թող օրհնոյի յիշատակը բոլոր անոնց, որոնք ջանացին որ գոյութեան գայ բազմաբարիք այս հաստատութիւնը: Չեղաւ աղէտ մը, որուն չհասաւ ան, կարիք մը՝ տնտեսական եւ կրթական, որուն իր իշխանական բաժինը չբերէր Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը:

Բարեգործականը միայն չգանձեց, այլ իր գանձումները կազմակերպեց նորագոյն թէքնիքով, բազմապատկելով զանոնք շահագործման նոր մեթոդներու համաձայն: Այս կերպով իր գործունէութեան մէջ կը համադրուէին հին եւ նոր ձեւերը, այսինքն Բարեգործականը կը կատարէր աղքատախնամի, կտակարարի եւ դրամատան դերերը միանգամայն:

Միութիւնը նպաստած է եւ կը նպաստէ հայ ժողովուրդի շինարարական ձեռնարկներուն: Կրթական ցանցեր տարածած է մեր բոլոր գաղութներէն ներս: Ստեղծած է երիտասարդական կազմակերպութիւններ, սատար հանդիսանալով անոնց մտաւոր եւ բարոյական կրթութեան: Որովհետեւ Հ. Բ. Ը. Միութեան իմաստուն վարիչները կը հաւատան թէ լաւ պատրաստուած անհատ մը խմորն է իր ժողովուրդի ապագային:

Միութիւնը այսօր իր գործունէութեան ամենէն տաք եւ բախտորոշ օրերէն է որ կ'ապրի: Արտասահմանի բոլոր կեդրոններու մէջ իր ստեղծած նիւթական, բարդական եւ կրթական քշիչները եւ անոնց յառաջահայեաց նպատակները պատիւ կը բերեն ազգայնաբան այս կազմակերպութեան:

Մեծ է թիւը անոնց, որոնք ոսկի շրջան կը կազմեն այս Միութեան: Հոս, խոր երախտագիտութեամբ եւ հիացումով սրտի, պարտք կը նկատենք մեր յարգանքն ու սէրը բերելու այս ոսկի շրջանի երկու աղամանոյ օղակներուն, մէկուն՝ իբրեւ հիմնադիրը Միութեան եւ միւսին՝ Վսեմաշուք Տիար Ալէքս Մանուկեանին, Միութեան ցկեանս Նախագահին, որ մեր օրերու ամենէն պատկառելի եւ բացառիկ արժէք ներկայացնող դէմքն է: Ամէն համայնք հայ գաղթաշխարհի կը նայի անոր իբրեւ ազգային մեծ բարերար եւ պարծանքը իր ժողովուրդին, որ գիտէ միշտ դիմաւորել ամէն կարիք իրեն յատուկ իմաստութեամբ եւ իշխանավայել զգացումներով:

Թող հազար ապրի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, որպէսզի որքան ատեն որ կարիք ունեցողներ գտնուին, վայելեն իր սէրն ու խնամքը, ըլլան յախտենական օրհներգու իր անունին եւ Միութիւնը միշտ կանգուն պահողներու կեանքին:

Սիրով եւ օրհնութեամբ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք հայոց Երուսաղէմի

«Միւն» տմասցիք,
1981 Ձ 1-2

